


ԲԱԺՆԵԳԻՆ

Ի Պուլիարիա
Տարեկ. 10 ֆր.
Վեցամս. 5 "

Արտասահման
Տարեկ. 12 ֆր.
Վեցամս. 6 "

Ամերիկա
2 Տոլ. 30 սենդ.

ԿԱՆԻՍԻԿ



ՊԵՏԱՆԻ

Գրութիւնք եւ
չեն տրուիր:

Հասցէ
DIRAN
PAPAZIAN
YILDIZ TABIA
VARNA
BULGARIE

ՇԱԲԱԹԱՅԱՆԴԵՍ · ԱԶԳԱՅԻՆ ԵՒ ԶԱԻԵԾՏՍԿԱՆ

Отговорникъ ГЕОРГИ ЯНТОВСКИЙ, Адвокатъ.

Ե. ՏԱՐԻ

ՄԱՐՏ. 24 ՇԱԲԱԹ 1901

ԹԻԻ 205

ԱԶԳԱՅԻՆ

ԱԶԳ. ՀԻՒԱՆԴԱՆՈՑ

Նոր վիճակագրութեան մը նայելով, Կ. Պուլ-
սոյ Ազգ. Հիւանդանոցը իր մէջ կը պարունակէ
1060 անկողին: Կառուցման թուականէն, այսին-
քը՝ 1832էն մինչև 1900 Յունուար 1 այդ հաս-
տատութեան մէջ ընդունուած են 90,000 հիւ-
անդ, որք, ծեր ու խելագար: Ասոնցմէ 80,000-ը
բժշկուելով արձակուած, 9,000-ը մեռած ու 1,000-ը
տակաւին նոյն հաստատութեան մէջ կը գտնու-
էին յաւելար 1ին:

68 տարուան մէջ ծախք եղած է 420,000 օսմ
ոսկի: Տարեկան ծախքն է 10,000 օսկի: Թուրք
կառավարութիւնը օրական 150 քաշ միս ու 600
քաշ հաց միայն յատկացուցած է Ազգին տան.
մնացած հացը, միսը և ուրիշ ամեն պէտքերը
աղգայնոց նպաստներով ու նուիրատուութիւննե-
րով կը հոգացուին:

—Թիֆլիզէն կը գրեն թէ Տ. Հմայեակ վար-
դապետ Արշարունի և Տ. Սամուէլ Սոզոմոնեան
ու Տ. Գրիգոր Գալուստեան քահանաները դատի
ենթարկուել են Սուրմալի գաւառին մէջ ռու-
սադաւանութիւնը ընդունող հայերը իրենց մայ-
րենի եկեղեցին վերադարձուցած ըլլալուն հա-
մար: Երեւանի դատարանը անպարտ արձակել է
այդ եկեղեցականները. բայց կառավարական ընդ-
դատախաղը դո՛ւ չմնալով այդ վճիռով, դիմել է
Թիֆլիզի բարձրագոյն դատարանին:

—«Բանասեր»ի խմբագիր Տիար Կ. Պասմա-
ճեան որ վերջերս ուղեւորած էր Ս. Էջմիածին,
կարդացեր է Օշականի, Մոզնու Յովհաննա վան-
քի, Գայիանէի և Զուարթնոց եկեղեցիներուն ար-
ձանագրութիւնները. նաև աչքէ անցուցեր է
Էջմիածնայ վանքին հնութիւնները, որոնք ան-
շուշտ բաւական նիւթ պիտի մատակարարեն իր
օգտաշատ հանդէսին:

—Մարտ 23 թուականով Բարիզէն մեզ կը գրեն.

«Շաբաթ դիշեր Էնթէնիէտ Սիւլիլի ընդար-
ձակ սրահին մէջ տեղի ունեցաւ, Բարիզի Հայոց
Բարեգ. Ընկ. երեկոյթ-պարահանդէսը: Երեկոյ-
թը որ կը գտնուէր Հայ. դատին ախոյեան երես-
փոխական Տրնի Գօշէնի հովանաւորութեան ներ-
քեւ, արտաքոյ կարգի փալուն և շքեղ կերպով
անցաւ: Երեկոյթին բարոյական յաջողութիւնը
յանչափս մեծ եղաւ, ինչ որ առհասարակ այդ
թէ յառաջիկայ տարիներն ալ այնպէս պիտի ըլ-
լան: Եւրոպացւոց ընտիր դասակարգէն ընտրեալ
բազմութիւն մը ներկայ գտնուեցաւ, Հայք մեծ
մասմար հոն էին ի բաց առեալ մենծ աղա դա-
սակարգը, որ հակառակ էր պարահանդէսին:
Ընկերութեան վարիչ մարմինը և կարգագիր
մասնախումբը անոր համար աւելի շնորհաւորու-
թեան արժանի են որ սուրճ ժամանակի մէջ, գը-
րեթէ երեք չաբաթուան մէջ ի գլուխ հանեցին
այդ խիստ ծանր դործը, եւ այն՝ Բարիզի պէս
տեղ մը, այնպէս որ լսող Ֆրանսացիք յանչափս
զարմացան: Երեկոյթին մասնակցած էին, ի մէջ
այլոց, Մուռէ, Սուլի, Ռամօ, Նախկին Սըկոն
Վէպէր, Օր, Վալանթին Բաթ, Բարիզի ամենէն
նշանաւոր դերասան եւ դերասանուհիներն, եւ
այլ մեծ օգերայէն և այլ թատրոններէ 10էն ա-
ւելի արուեստագէտներ: Հայ արուեստասէրներէն

մասնակցած էին Պ. Պ. Էլմասեան (դաշնակահար), Ամիրբեան (երգիչ՝ գեղեցկաձայն) եւ Գրիգոր Կիւլպէնկեան (աշակերտ ողբերգութեան) արտօնք մանաւանդ Ֆրանսացիներէն շատ ծափահարուեցան։ Զուտ հասոյթ կը գուշակուի 1500 Լ 1800 Ֆր. Այս գործին մէջ ֆուստը եղաւ միայն քահանայն, որ կարգադիր մասնախմբի Ատենապետութիւնը յանձն առնելու համար մէկ-երկու հոգիի հետ Տ. Մանթաշեանի դիմելու եղեռնագործութիւնը և անքատոյսականութիւնը գործած էր (թէեւ չընդունուեցաւ)։ Վասն զի քառասունք եւ արքակոյն մարդիկ երեսը վար առին այդ դիմումը ըրած ըլլալուն համար մեր ՄԱՔՐԱԿՐՕՆ քահանային, սպառնալով միանգամայն որ եթէ իրենց և անոր (անունները ապագային) խօսքէն դուրս ելնէ՝ հոս չկրնար քահանայագործել։ Գիտցէք ընթերցող թէ, այդ սպառնալիք եղած է ՄԻԱՅՆ Բարեգործ. Ընկ. համար աշխատած ըլլալուն։ Միամիտ կեղծաւոր-փարիսեցիներ...

ԱՐԳՈՍ

ՆԱՄԱԿ ԽՄԲԱԳՐՈՒԹԵԱՆ

... Խմբագիր,

Հաճեցէք կաղաչեմ սոյն գրութիւնս ԱՆՊԱՏԱՆԻ Հրատարակել Զերթերթի մօտակայ սիւնակներուն մէջ։

Իսակ Արմախիի գրած մէկ նամակիս առթիւ

Դաշնակցական եմ ըսող երկու դատարկաշրջիկներ, ամսոյս 22ին սենեակս գալով ինձ հետ խօսակցութեան միջոցին, առանց իրենցմէ խօսք բանալու, խօսքս Իսակ Արմախիի գրած նամակիո բերելով զգացուցի այդ երկու դատարկաշրջիկներէն մէկուն թէ՛ Իսակ Արմախի ի՞նչպէս զիս չճանաչէր, եւ դու չե՞ս գիտեր որ զիս կը ճանաչէ։ Հաստատական պատասխանին վերայ լռելով, բռնի դրամ պահանջելու մասին ակնարկելուս, ատոր ալ ապացոյցը տուին հուսկ ուրեմն մատնանի ընելով Մակեդոնական քոմիտէն։

Ինչպէս իրենց ներկայութեան զգուշացնելու համար հարկ եղածն ըսի, հրապարակաւ պատառոր եմ կրկնելու իբրեւ ժողովուրդի զաւակ ամենայն ինչ։

Այդ դատարկաբաններն ի զուր աշխատեցան ինձ համոզել թէ՛ իրենք կազմակերպեալ մարմին են։

Եթէ օրինաւոր, ազգին վստահութեան ար-

ժանի կազմակերպութիւն մ'ունին, ինչո՞ւ ուրեմն Մակեդոնական քոմիտէի անունին կառչելով կուզեն գործ տեսնել։

Եթէ ազգին շահերը մտածողներ էին, ինչո՞ւ փոխանակ մեր ազգայիններու ոիրտը դէպի յեղափոխութեան Ս. գործը տաքցնելու, կերթան կը դիմեն օտարներու և անոնց միջոցաւ ի գործ դնել կուզեն իրենց սպառնալիքները։

Ու այս կերպով ինչո՞ւ կը զայրացնեն ժողովուրդը եւ դուռ կը բանան եղբայրասպան կուրմը, որուն հետեւանքը այնքան ծանր է օտար երկիրներէ սոսկ։

Ըսի իրենց այս, եւ հրապարակաւ ալ իմացնել պարտականութիւն կը զգամ, որ ազգը իրենց վրայ վստահութիւն չունի եւ երբէք ալ չը պիտի ունենայ և ատելով պիտի ատէ իրենց պէսները. ուստի իրենց յիշեցուցի թէ՛ դուք եղբայրասպանութենէ, անմիաբանութենէ դոյացած անվստահութեան ուժ տալու համար Մակեդոնական ընկերութեան աղնիւ տարրը կուզէք գրգռել ձեզ ընդդիմացողներուն դէմ, մենք ալ ժողովուրդս, ժողովրդեան հարազատ զաւակներըս պարտաւոր կզգանք ինքզինքնիս դրամներու բռնի գանձումը բռնի ու ամեն զնով կասեցնել և թէ քաղաքավարօրէն ալ գանձելու հետամբտին, հանրագրութիւն մը պատրաստելով բարեխնամ կառավարութեան միջոցաւ փրկել Պուլկարիոյ ամբողջ հայ հասարակութիւնը։

Արդ՝ այս ըլլայ իմ հրապարակաւ պատասխանս այդ երկու մոլորեալներուն։

23 Մարտ 1901

ՊԱՂՏԱՍԱՐ ՅՈՎՀԱՆՆԵՍԵԱՆ

Վառնա

Վանքի

Յ. Գ. Մէյմէկ օրինակ ալ իրաւունքի եւ Շարժումի շրկուած է հրատարակութեան խնդրանքով։

Նոյն

ՔՆՆԱԴԱՏԱԿԱՆ

... Խմբագիր.

Երկար ամիսներէ ի վեր «Հայրենիքի» Զոհեր» վերնագրով հրատարակուած բանասիրականին մէջ մերթ ընդ մերթ արտառոց նախադասութիւններ ու բացատրութիւններ երեւան կուգան, որոնց թուումն մասանցը ընելու համար «Հայրենիք» էջերը նեղ են։ Միայն, ըսածնիս հաստատելու համար այս անգամ յառաջ կը բերենք հետեւեալը որ անցեալ շաբաթ օրը տեսնուեցաւ տեղական թերթին մէջ։

«Իբրեւ մայր, քոյր, ամուսին և ճարտար, գիւղացի հայ կինը, իր առանձնայատկութիւններ»

րով գերազանցապէս յարգելի է: Անիկա չունի ան կեղծ, կապկային անբնական ձեւերն ու լեզունները, որոնք քաղքենի ու սալոնի կնոջ թուանաւոր ու պատրող օձային ուժերն են: »

Ինչպէս կը տեսնուի, այս պարբերութեամբ պարոն Հեղինակը բոլոր բաղբենի կնիկները առանց բացառութեան կանպատուէ ու կը նախատէ, բնաւ նկատողութեան չառնելով թէ՛ ինքն ալ ուրիշ բիւրաւոր հայերու պէս բաղբենի կնոջ մը հետ ամուսնացած է որ իւր պատուոյն և զաւկին վրայ գուրգուրացող հայուհի մ'է:

Այլ յորդորենք Պ. Վիպագիրը որ կամ բնաւ չը գրէ և կամ շատ մառածելով գրէ, որպէս զի ժողովուրդին մէկ ստուարութիւն դասակարգը նախատելու ձախող ու անելի դիրքին մէջ չի յնայ ուրիշ անգամ:

ՄԿՐՏԻ 2 ՁԻՒՄԻՒԹԵԱՆ

Բաժ.— Ըստ իս, «դարամտիկ այս տարիին մէջ» (?) տեսնուած այս տեսակ գրութիւնները զարմանալի չեն, որովհետեւ առտուն կանուխ ելլող ու գրիչին տեղ բրիչը կամ աւելին կոթը ձեռք առնողը հրապարակ կուգայ կոր իբր հեղինակ, վիպագիր, հրապարակագիր, յօդուածագիր, ևայլն ևայլն, որոնցմէ ազատեսցէ զմեզ բարձրորդ փորձութեանց. ամէն:

ԿՍՄԻԹ

Հետեւալին հրատարակութիւնը խնդրուած է մեզմէ.

Մուշու Հայելի Փափագեան.

«Անցած օր էլայ ժամ կացի, արեւադալ մը մտիկ ընեմ ըսի. չիւնքիւ մեր կիտցածը մեծ պաքին արեւագալները տարին հեղ մըն է տէյի սունթուռու կը կարդան տէ մարդուն սիրտին մխիթարանքը կը շատցունեն: Հոգի, ումէտըս փորս մնաց, նէ՛ ձայնաւոր մը կար նէ ալ վարժապետ. տէր պապան իլէ լուսարարն ալ չըլլան նէ՛ ժամուն տուները կոցելու է. ան զավալըներն ալ ամեն բանին հասնելու համար ածելէ մըն է կընեն, կիտես քի էտեւուն խօվալամիչը չող կայ. Տէր ամենակալը պաշայելը ու փառքօրը կոխելը մէկ ըրին: Բա ճանըմ, ոօրմագ

այըպ օլմասըն ամա, ի՞նչու վարժապետին այլըխ կուտայ կոր աղգը. մինակ կիրակի սւ ակում օրերը ժամ գալով, խատիֆէ շուպառան կլօխը, անկէց սողրա խապառթալը շապիկ մը հագած գօգօն գօգօն խուռուլմի՜չ ըլլալու համար է. հիչ հարցնող փնտռող չի կայ. ամա ինծի ըսին քի քէֆը ուզէ նէ, քանի մը հատ ալ ճնկէ նէ՛ գիշեր ատեն պիլէ ժամ կը վազէ իր ահպապին պսակին ձայնաւորութիւն ընելու համար, հատտ ունին նէ ուղտ խապառալը շապիկը չիտան, տուները տօլապները կօրել կուտան էղեր:

Աս նամակս թուանս, արեւ սիրեմ Արութաքիիս կրել տուի, սախըն անկաճի էտի չի ձըգես, արեւուդ համար նօխթան նօխթան կրես պիտի. հէմ անանկ Գամշաթգա պան շատ կայ չպիտի կրուի. չիտկէ չիտակ Վառնա ըսես պիտի: Հօշունտու, թող միտքը պահէ. աս ըրածին խարչըլըխ ըլլալով Զատկին շաբթուն «Զայնաւոր վարժապետն ալ անտես մի՛ առնէք» ըսեն նէ՛ ան արա քունս էկածի պէս աչքս պիտի դոցեմ անտես պիտի առնեմ իշթէ. թող ան ալ էրթայ տէ մեծպաքին ժամ չիգալը սորվի:

Շիտակ զուրցող ՇՈՂԱԿԱԹ

Նայէ՛, մազ մնաց պիտոր մոռնայի, աս գրածս հիչ չի փոխելով խաղէթայիթ մէջ առնես նէ՛ գալ շաբթու անդին ասդին տեսնալիք շատ մը բաներս ալ պիտի իմացունեմ քեզի:

Հրատարակուեցաւ «Այինէի Լէթայիֆ»-ի 2օրրորդ տետրակն ալ: 20 տետրին բաժնեդինն է Պուլկարիոյ համար 2 ֆր. արտասահման 2ու կէս ֆր. կանխիկ:

ԱԶԴ

Բարեյիշատակ եղիազար Մուրատեանի հեղինակած «Քննական Պատմութիւն Արշակ Բ.ի և անոր Պապ որդւոյն» անուն երկասիրութիւնը այս անգամ լոյս տեսած է Աեքսանդրիոյ «Արքս» նորահաստատ տպարանէն և կը ծախուի ի գին 2^{1/2} ֆրանք: Պուլկարիոյ և Ռումանիոյ մէջ ստանալ փափագողք գիմելու են մեր խմբագրութեան:

ԻՆՉ Է ԲԱՐԻՉԳՈՒՆԻՆ

Բարիզցունի մօր մը կարծիքն իր աղջկան վրայ.— Բարիզցունի հրեշտակ, խելքով սատանայ, տանտիկնութեան գանձ մըն է։ Հետոն ա՛մուսնացողը, ով որ ալ ըլլայ, արժանի չէ իր վայելած երջանկութեան։

Բժշկութեան երիտասարդ ուսանողի մը կարծիքը Բարիզցունիին վրայ.— Բարիզցունին Բրատոյի և Շօմիէրի լաւագոյն վալտըն է։ Կրնայ ամբողջ գիշերը թէ՛ ընթերցել անցնել և թէ՛ առանց ընթերցել անցնել։ Մինակ էակն է որ կըրնայ դիմանալ ծխախոտի թանձր մոխրին, և ամենայն դիւրութեամբ քաշել հանել ծրեք բան՝ իր ձեռնոցները, շալն և սիրտը։

Օսարականներու եւ մասնաւորապէս Ռուսերու կարծիքը Բարիզցունիին վրայ.— Խելքի և դիւրազգածութեան բազմաթիւութիւն մը, հրապոյրներու անսպառելի գանձ մը, ամենէն փայլուն ապացոյցն է Պրանսայի՝ միւս ազգերու վրայ ունեցած գերազանցութեան։ Միակ կիսն է զոր մարդս կերպէ 19 տարեկան հասակին մէջ, և վաթսուին մէջ ալ դեռ կը յիշէ։

Անգղուհիներու կարծիքը Բարիզցունիին վրայ.— Անկարելի է անոր նմանիլ, պարկեշտութիւնն և Սեպտեմբերի օրէնքը կարգելեն։

Քանի մը երիկներու կարծիքն իրենց Բարիզցունիի կանանց վրայ.— Անտիրտ ընկերուհիներ են, և միայն ուրախ զուարթ կեանքը կը սիրեն։ Քուրջերու կարկտողներ են եւ բարոյական որ և է զգացման ոտուերն անգամ չունին։ Անհաւատարիմ ամուսիններ և անխոհեմ մայրեր են։

Ամենէն շաւաղոյն եւ հետեւաբար ամենէն գերազանց կարծիքը կամ Բարիզցունիին պատմութիւնը.— Ընդհանրապէս կը կարծուի թէ Բարիզցունին Բարիզ ծնած է։ Սխալ կարծիք։ Բարիզ նախ աշխարհիս քաղաքն է, վերջէն՝ եթէ տեղ աւելնայ՝ Բարիզցունց քաղաքն է։ Քաղաքակրթութեան այս շնորհալից թիւը, կնոջական այս ըսքանչելի գոհարը, այն կինը՝ որուն խելքը մեծահաշակ կը գովեն ի բեգերսպուրկ, և որուն ձեւերուն ալ նմանելու կաշխատին ի Քանդոն (Չին), այն կինը՝ որու ամենափոքր քաղաքն օրէնք մը կըլլայ աշխարհիս ամէն կողմն ուր սալօն մը կայ, մէկ խօսքով Բարիզցունին կը ծնի ոչ թէ ի Բարիզ, այլ այն ընդարձակ գաւառին մէջ որ Սէն-է-Ուալ կը կոչուի։ Մանթ, Վէրսայլ,

Ռամպուէ, և մինչեւ իսկ ի Փօնդէնպլօ ծնելով շատ կիներու կարծիքով՝ որք Բարիզցունի կոչուելու փափաքով կը տոչորին, Բարիզցունի ըլլալէ չեն դադրիր։ Ասի, հակառակ միւս ամեն ճշմարտութեանց, այն աստիճան անուարանալի ճշմարտութիւն մէ՛, որ չկայ Բարիզցունի մը որ հօրեղբայր մը, հաւ մը, կամ վերջապէս հեռաւոր կամ մօտաւոր ազգական մը չունենայ կամ էթամբ, կամ Քօրպէյլ և կամ Բարիզի շրջականներն սփիւռ անթիւ գիւղերէն մէկուն մէջ։ Քաղաքային օրինաց այս բռնաբարման բռն պատճառն ալ սոսքէ որ Բարիզցունին գիւղի համար հոգի կուտայ, մանաւանդ ամառն երբ մտնիչակները պարտէղներուն շուրջն իրենց քաղցր հոտը կը բուրեն եւ ելակն ալ Մարլի և Մէտէօնի բլուրներուն վրայ կը տարածուի։ Իր սրտին մէջ՝ ուր նախնական բան մը չէ մնացած՝ միշտ կայ անկիւն մը՝ ուր հովուերգական իղձը վառ կը մնայ դեռ։ Մենեւուն պէս ճերմակեղէններու մէջ փաթթելով կը շրկեն. ո՛ւր.— Աստուծոյ պահպանութեան վստահ՝ կարելի եղածին չափ հեռու տեղ մը ուր սոնտու կին մը զայն ցորեկը գամէ մը կը կախէ և գիշերն ալ վերմակին տակ կը խղճէ լացերը չլսելու համար, եւ ծնողքը վրան անգամ չեն մտածեր։ Օր մ'ալ, 18 ամիս կամ երկու տարի վերջը, հայրը կըսէ. «Աղէկ միտքս եկաւ, մեք աղջիկ մը ունինք գեղը, ստնտուին քով»։ «Անուշիկ զաւակ, կը պատասխանէ մայրը, ալ բերել տալու ժամանակն եկաւ։ «Այս օրերս գրեմ»։

Եւ իրօք, չաբաթ մը վերջը գիւղացի կին մը թեւերուն մէջ գրկած, ծաղիկներու փունջի և գլուխ մը կլոր պանիրի մէջտեղ, վայրենի պղծտիկ աղջիկ մը կը բերէ, որ ճիշդ հօրը պէս տղեղ է, և մայրը պազենի ռկսելուն պէս, գլուխը կը դարձնէ։ Ահա՛ այս կերպիւ կը մտնէ աշխարհ այս հրաշալիքը, հետեւաբար սխալ է այն կարծիքը թէ Շնորհքերը (Իիցանոյշք) կօրորեն զինքը և թէ նուազարաններու ձայնով կարթընայ։ Բնութիւնը կը շինէ Բարիզցունին։ Տղայ հասակին մէջ կ'ստանայ ան տոգոյն վարդի դոյնը, այն առողջ և վայելուչ ձեւը, զոր օտար տղաքները, նոյն իսկ անգլիացի տղաք չունին։ Պարմանուհի եղած ատեն, կը ներշնչէ այն կանխահաւ խելքը, այն սուր իմացողութիւնն որք զարմանք և շատ անգամ ալ սարսափ կաղերն բարեմիտ գաւառացիներուն։ Ութ տարեկան եղած ատեն հետաքրքիր և որամիտ է, և եթէ առիթը պահանջէ, կարծես թէ 20 տարեկան աղջկան չափ խելք ունի։ Քաղթածին աղջիկն եւ Բարիզցունի այս մասին իրարու կը նմանին. կարծես թէ ինչ որ կընէ քաղաքակրթութեան շուտ հասցնող արեւը, նոյնը կընէ նաեւ գաղթական-

նութեանց կիզիչ եւ արգաւանդ արեւը: Կարծեմ թէ Բարիզցուհիի մը կենաց ամենէն նշանակելի կէտերն են իր մանկութիւնն եւ ծերութիւնը: Երբ իր գեղեցկութիւնը դեռ հասունցած չէ, չափազանց խելք ունի: Երբ իր խելքին հետ, կենաց զանազան պարագաներով, իր փորձառութիւնն ալ կաւելնայ, իր գեղեցկութիւնը կորսնցուցած է այլ եւս:

Թարգմ.

Խ.



Աներ մը իւր փեսայունին.

—Քեզ փեսաս անուանելէ առաջ հարցում մը ունիմ.

—Ինչ է.

—Իրամագլուխ ունի՞ս.

—Այո՛, եօթը մահացու մեղքերը:

Տեսա՞ր հիմա, ո՛րքան ծաղրելի ես խմած ըլլալուդ համար. ամեն մէկ քայլիդ պատերուն կը զարհուլիս կոր.

—Խմած ըլլալուս համար չէ որ պատերուն կը զարհուլիմ, այլ խմելէս ետքը պտտելուս համար:

—Շամշագրամ աղա, չո՛ւտ վազէ՛. զաւակդ ինքզինքը զարկաւ ու արիւններուն մէջ կը լողայ.

—Ի՛նչ ահագին ոռւտ. տղաս ամենեւին լուզալ չգիտեր:

Նկարչի խանութին մէջ.

—Արդարեւ սա նկարածդ շատ գեղեցիկ պատկեր մըն է և ապահով եղիր որ պիտի առնէի, բայց աւա՛յ որ գոյնը գեղեցիկ չէ...

Նկարիչը.—Հոգ չէ՛ բարեկամս, ասիկա քաղաքական մարդու մը պատկերն է, ու անոնք ալ գոյներնին շուտ շուտ կը փոխեն:

Տիկին մը որ մսավաճառին խանութը գացած էր գնումներ ընելու համար, հոն չուն մը տեսնելուն՝ կը հարցնէ խանութպանին.

—Ձեր շունը միս չը գոլնա՞ր.

—Ոչ, տիկին. շատ շատ կը լզէ:...

Գինեպանի մը հարցուցին թէ.

—Ինե՞մոլ մը ի՛նչ տարբերութիւն ունի ուղտէն.

—Ուղտը կրնայ ութ օր կենալ առանց խըմելու, իսկ գինեմոլը կրնայ ութ օր խմել առանց կենալու:

Մուրացիի մը ճամբան հարուստ վաճառականի մը հանդիպելով կըսէ.

—Ներեցէք պարոն, ձեզմէ բան մը պի...

—Ներեցի, կը պատասխանէ վաճառականը ու ճամբան կը շարունակէ:

Ոստիկանութեան գոմիսէրը կը հարցնէ իր դէմը բերուած երկու մարդոց մէկուն.

—Ո՛ւր կը նստիք, Թանա՛շ.

—Տէր գոմիսէր, ես առանց բնակարանի եմ.

—Եւ դո՛ւք, Նիգօ՛յա՛.

—Անոր վրայի յարկը Պ. գոմիսէր:

Ճաշարանի մէջ.

Յաճախորդը.—Կարօ՞ն, սա բերած ձուկիդ համար նոր բռնուած է ըսիր ամա, կը հոտի կոր:

Կարսօնը. (պաղարիւնութեամբ).—Էֆէնտիմ, Ամերիկայի գտնուիլն ալ քանի մը հարիւր տարի է ամա, նոր աշխարհ կըսուի դարձեալ:

—Ղուկիոս աղա, ան չէ ամա, հանրմը ո՛ւր է կըսէր Մարիամ տուտուն, այցելութիւն տալով Ղուկիոս աղայենց.

—Սո՛ւս եղիր, կը քնանայ կսր տահա:

—Ձեւայ հիւընդցած ըլլայ. ձայն տուէք կէնճին, աս ատեն քնանալ կըլլայ:

—Թող քնանայ, իմ ուզածս ալ ան է. կուզէ նէ քանի մը օր քնանայ:

—Քա աս ի՛նչ ըսել է. վա՛յ պանա, կէնճին խարէզդ ի՛նչ է:

—Խարէզի բան չիկայ. քնացած ատենն է միայն որ չի խօսիր ու գլուխ չուռեցներ:

ՁԱՏԿՈՒԱՆ ՊԱՏՐԱՍՏՈՒԹԻՒՆ

Այր եւ կին .

— Ելիկում աղտ, իշթէ կիրակի ծաղկազարդէ . տանձ էր նէ հասաւ , խնձոր էր նէ կարմը-րեցաւ :

— Ատ ի՞նչ ըսել է .

— Արթըխ փախչելիք ճամբայ չունիս , էն առաջ Միրիճանիս ու Նշանիս մէյմէկ խաթ աղւոր լաթ պիտի առնես :

— Հը .

— Ձապէլիս ու ինծի ալ մէյմէկ սկառքին . կանթ էլտիվէն մը . շաբաթայիտ նոր թիւրին ու դարձնողչէքին համար ալ 20 ֆրանք պիտի տաս :

— Հը .

— Նայէ՛ , նոր ֆիստան չեմ ուզեր կոր . ծընունդին շինած ուղի իտարէ պիտի ընեմ քի մայիսի մօտային նոր մը շինեմ :

— Հը .

— Գիտես եա . Ձապէլս պաշտան պաշ պահք բռնեց , անոր ուղածները պիտի առնուի :

— Հը . հը .

— Հինգ օխա չէօրէկ . 300 հաւկիթ , չորս օխա սուճուխ բաստրմա , երկու թիւրլիւ պանիր , միս , միտեա , ուսյալի , զէյթին եաղջ .

— Հը . հը . հը .

— Պահքէն ետքը , թուրֆանտա զավզովաթ կուզենք . էնկինար , թաղէ բախլա , խուզու խուլաղի ըսպաննախ , խըվըռճըխ թօփ սալաթա :

— Հը .

— Իալգան պալըղի , սարտէլա , էնէզ , մէրսին , ժանպօն .

— Հը . հը . հը .

— Անուշի համար 2 օխա չէքէր . խահուէ . իլիմոն , փորթուգալ , պուշին վրայ դնելու համար տէմէթ մը զիւմպիւլ :

— Հը . հը . հը . հը . հը .

— Ատ ի՞նչ է . հնհնուքդ բռնեց . հը հըէն պաշխա ճուղապ չելլար կոր բերնէդ .

— Ասանկ երթայ նէ չարբընթըս ալ պիտի բռնէ .

— Մեղայ տէր Աստուած .

— Էնմէ ալ պիտի իջնէ .

— Յիսուս Գրիստոս . տահա նէլէր .

— Տահա նէլէրը ինչ է . Դանիէլին գիրքէն ալ երկան ադ սըբարըշները լսող ո՞ր էսնաֆը հնհնուքէ , չարբընթըյէ չի բռնուիր :

— Քա ճանրմ , Ձատիկ է .

— Ձատիկ է տէյի պախալին ու մանավին խանութները հոս ագտարմա՞ ընելու ենք , Խըթ-լըխէ՞ կելլանք կոր . Վախիթ ունի՞նք միհիչ չէք հարցուներ , կուզենքները կը շարէք :

— Աման ճանրմ ելիկում աղա , ամեն ատեն չունիմ կըսէք .

— Դուք ալ ամեն ատեն կուզեմ կըսէք :

— Էյ ասոնց սօ՞նը .

— Ասոնց սօնը՝ անցած տարուան պէս կընենք .

Դուք «կուզենք» կըսէք ,

Մենք «չունինք» կըսենք .

Իշթէ ասանկով

Ձատիկը կանցունենք :

ՍԱՄԻԿ

ՅԵՐԱՅԻՄ

(Աժանս Բոժոժիկ և Ընկ .)

Մուսալլա

Հասկցուեցաւ . «Վառնայէն բաւական կլորիկ գումար մը հաւաքուած (?)» ըլլալու մասին եղած տարաձայնութիւնը տեղական թերթի մը խմբագրին խոստումնքում է եղեր . Անանկ կլորիկ մլորիկ եալանճի տօլմասիները կլլող չիկող . հետեւաբար այդ տարաձայնութիւնն ալ պօռու կը մնայ :

Ուլիցա Բօթբօթ

Մասնաւոր վարժարանի մը բարձրագոյն կարգի աշակերտներէն մէկ քանիներ իրենց տնօրէնին բռնած անհամբոյր ընթացքին պատճառաւ վարժարանէն առին քալեցին :

Երրորդ թաղ .

Ձիպա հանրմին ապսպրած ռաւսքիս պօյասին էմանէթճին մուցած ըլլալով Պօլսէն բերելու , Ձիպա հանրմը բարկութենէն հիւնդցաւ ու անկողին ինկաւ :

Խ. Գ. ՀԻՆՏԼԵԱՆ

ՏԵՍԱԿԱՆ ԵՒ ԳՈՐԾՆԱԿԱՆ

ՔԵՐԱԿԱՆՈՒԹԻՒՆ

Պաշխարեհն լեզուի

Գին 1 ֆր.

Դիմել Հայերի խմբագրութեան ,

ԹԵՐԹՈՆ «ՀԱՅԵԼԻ» (12)

ՌԸՆԷ ՏԸ ԲՕՆ ԺԷ

ՄԱՐԳԱՐԻՏՆԵՐՈՒ ԳԵՏԸ

(ՎԱՐՄԱՐ-ՄԱՄԱԿԱՆԸ)

Ամբողջ ժամեր պառկած կանցունէր իր փսիաթին վրայ, տենդասարսուռ, այտերն իր նիհարցած ձեռքերուն մէջ և իր սեւածիր մեծ աչուքները պարապին մէջ յառած: Չէր սարսուար իսկ երբ դատապարտեալներուն աղաղակները մինչեւ իր ականջը կը հասնէին:

Իր հոգին ու իր մարմինը կտրծես անզգայացած էին:

Երկու շաբաթներ անցան այսպէս, եւ իրօք ա՛լ բանի մը գիտակցութիւնը չունէր, երբ առտու մը բանսին դուռը բացուեցաւ այս անգամ ոչ միայն համր կնոջ առջև, այլ երեք մարդերու որոց մէջ անմիջապէս ծանցցաւ ոստիկանութեան վերապետը ու դահիճը:

Երրորդը դատաւոր մըն էր: Գաժան ձայնով ծանուց անոր թէ դատարանին առջեւ երեւնալու ժամին հասած էր և հրամայեց որ պատրաստուի իրեն հետեւիլ:

Խեղճ աղջիկը ինքզինքը մեքենաբար յանձնեց իր պառաւ պաշտպանուհիին, որ կտրելի եղածին չափ շրմկեց անոր վրան գլուխը. դահիճին հրամանովը, Սօլ-Պրոտէ անոր կարկառեց երկու դողդոջ ձեռքերը, զորս իրարու կապեց ամրապէս, իբր թէ վախնար որ մանկամարդ աղջիկը ընդդիմութեան կամ փախուստի փորձ մը կընէ. յետոյ այդ մարդը չուան մը կապեց վիզը՝ անով առաջնորդելու համար զայն դատաւորներուն առջև:

Ապա, բրտօրէն, անողորմաբար, իր պետերուն դարձաւ: Ոստիկանութեան տնօրէնը խօսք մը ըսաւ. տխուր թափօրը ճամբայ ելաւ:

Պաշտօնաւարը եւ դատաւորը առջեւէն կը քալէին:

Դահիճն անոնց կը հետեւէր, քաշելով Լէնկի այրին, որ իր վիրտուր ոտքերուն վրայ հաղիւ կրնար կռիւլ: Համր կինը կը բռնէր զայն՝ բազուկները մէջքին անցուցած:

Այսպէս անցան բանտարկեալներուն եւ պատժի գործադրութեան բակէն, ուր կախուած մարդ մը դեռ կը տառանէր կախաղանէն, արիւնը կաթիլ կաթիլ կիւնար կարմրած գետինը, և մութ նրբանցք մը բռնեցին

որ բանտն հաղորդակցութեան կը դնէր այն շէնքին հետ ուր կը գտնուէր եղեռնական տառանք:

Հինգ վայրկեան ետքը, միշտ իր սոսկալի տառաջնորդէն աւարուելով, բայց իր բանտապանուհիէն լքուած զոր արգելած էին հեռուն երթալու, խեղճ Լիու-Սիու դատական սրահը կը մտնէր:

Մեծ սենեակ մըն էր, որուն պատնիքը կարմիր թոցներով ծածկուած, հոս հոն դարդարուած էին առածներով ու պատժական օրինադրքին յօդուածներովը:

Երեք որոշ մասերու բաժնուած էր:

Խորը, բարձր գահաւանդի մը վրայ, կը նստէր ատենին նախագահը, Մէնկ մանտարէնը, իր հանդիսական հանդերձովը և խորհրդականներովը շրջապատուած:

Այս դատաւորները նստած էին կարմիր գորգապատ սեղանի մը առջեւ, որուն վրայ կը գտնուէին դատաւարութեան թղթերը, վրձիններ և գունատախտակներ չինական մեյքապի համար, օրէնսդրական գիրքերը զորս դատաւորները պէտք կունենային բնեւելու, և վերջապէս խորշադարան մը թուաւոր փոքր փայտերով լեցուն որոց գործածութիւնը շատ չանցած պիտի հասկընանք:

Մէնկին ետեւը կը տեսնուէր իր հովհարակիրը, եւ աւելի հեռուն, պատին կրթնած, կէս երկոտասանեակ Եւրոպացիներ, առանձնաշնորհներ, որք դատաւարութեան ներկայ գտնուելու հազուադէպ շնորհն ընդունած էին:

Դահիճը, օգնականները և դատական քարտուղարները բարէ սանդուխին տասներկու աստիճաններուն վերայ կեցած էին որոցմէ սրահին մէջտեղը կիջնուէր, որ վերապահուած էր ամբաստանեալներուն, վկաններուն եւ պահակներուն:

Սանդուխին վրայ կեցողները կը շարժէին տանջանքի զանազան գործիներ, եւ երբեմն սպառնալիքներ ու յիշոյներ կարձկէին, յանցաւորները սարսափեցնելու նպատակով:

Գալով հասարակութեան յատկացուած տեղին, միմիայն սրահին ծայրէն չէր բաղկանար, այլ եւ լայն նրբանցքներ երկու կողմէն կերկարէին մինչեւ գահաւանդը, այնպէս որ հետաքրքիրները կրնային բան մը չը կորսնցունել սոսկալի տեսարանէն զոր յաճախ կը ներկայացնէին եղեռնական դատաւարութիւնները:

Մէնկի հրամանովը պահակները բացին արտաքին դուռին վրայ նայող երկու դուռները, ուր բազմութիւնը անհամբերութեան հազարաւոր աղաղակներ կ'արձկէր, եւ հասարակութիւնը դատարանին մէջ խուժեց

անանկ ուժգնութեամբ որ զինուորները պարտաւորեցան կեցունել զանոնք:

Ասան զի աւելի բան բան տարիէ ի վեր դատ մը այսբան յուզում չէր պատճառած:

Նախ եւ առաջ զոհին հայրը, Լէնկ-Թիէն-Լօ քանդոնի ամենէն առաջնակարգ վաճ-ռականներէն մէկն էր. յետոյ, ամբաստանեալներէն մէկը կին ըլլալով՝ հետաքրքրական էր տեսնել թէ պիտի խոստովանէ՞ր իր ուժիւրը և թէ ի՞նչպէս պիտի կրէր տոնջանքը:

Սակայն ոչ այս շարժումը ոչ այս աղաղակները խլած չէին Լիու-Սիուին իր անշարժութենէն:

Իր դատաւորներուն առջեւ հասնելով, կքած էր փայտէ նստարանին վրայ զոր դահիճը ցուցուցած էր իրեն, և հոն, ձեռքերը կապուած և չուանը ձիւր, կը սողաւոր, սրտանց կանչելով ամենէն արագ մահը, ազատելու համար անպատուութենէ և ցաւէ:

Երբ Մէնկ խօսք ուղղեց անոր, ներկաներուն լէռութիւն հրամայեցէն ետք, ստիպուեցաւ երկու անգամ հարցապնդել զայն որպէս զի աղջիկն հասկնայ թէ դատաւորն ի՞նչ ըսել կուզէ:

—Ամբաստանուած էք, ըսաւ անոր, թէ ձեր հարսնիքին գիշերն իսկ սպաննել տուած էք ձեր ամուսինը: Կուզէ՞ք ոճիրնիդ խոստովանիլ և ձեր մեղսակիցին տեսնել տալ:

—Արդէն երդուեցայ, պատասխանեց Սոլ-Պրոտէ անուշ ձայնով, թէ բան մը չէի գիտեր, թէ անմեղ էի այդ մահէն. նորէն կերպնում:

—Տիար Լէնկ, շարայարեց նախագահն առանց պնդելու, վասն զի կը սպասէր այս խօսքերուն, գիտցածնիդ յայտնեցէք դատարանին:

Հարուստ վաճառականը, որ գահաւանդին վրայ իսկ յատուկ աթոռ մը գրաւած էր, ոտքի ելաւ, ողջունեց դատարանին անդամները մինչեւ գետին խռարհելով, եւ բուռն յիշող մը արձկելէ յետոյ իր հարսին առանց մանրամասնութիւն մը զանց առնելու, պատմեց զաւելին սպանութեանը մասին գիտցածները:

Չմոռցաւ ոչ Մի մեհեանին մէջ երիտասարդ Ի-Թէին հետ ըրած հանդիպումը, ոչ այս վերջնոյն առաջարկները՝ իր հօրաբորոջ աղջկան մասին. ոչ քօի կրօնաւորին հովհարին գիւտը զոհին մարմնոյն տակէն, ոչ անկարգ վիճակը յորում գտնուած էր հորսանեկան սենեակը, անկողնին մէկ սնարին վրայ արիւնոտ ձեռքի մը գրոշմը, և վերջապէս գողութիւնը գոհարներուն եւ թանկագին առարկաներուն զորս իր վաւերը ընծայած էր անամօթ աղջկան որ անշուշտ կանխամտածած էր անոր դաշուհասար մահը:

Եռանդուն, կրքոտ պատմութեան եւ այն հեծկլտանքներուն զորս հայրական զայրոյթն ու վիշաք կը խլէին Լէնկէն, բազմութեան մէկ զայրազին աղաղակն յաջորդեց:

—Լսեցիք, ըսաւ Մէնկ նորէն խօսքն ուղղելով Սոլ-Պրոտէի, երբ ունկնդիրներուն յուզումը քիչ մը մեղմացաւ, կուզէ՞ք խոստովանիլ ձեր ոճիրը եւ ձեր մեղսակցին տեսնել տալ:

—Բան մը չեմ գիտեր, մրմնջեց մանկամարդ աղջիկը:

Դատաւորը ձեռքն երկարեց իր աւջիւ գտնուող խորշադարանը, տախտակ մը առաւ անկից որուն վրայ բանի մը բառ գրուած էին, եւ գահաւանդին սանդուխներուն վրայ նետեց:

Դահիճը առաւ զայն, կարդաց, նշան մը ըրաւ իր մէկ օգնականին, և երկուքն ալ մօտեցան ամբաստանեալ աղջկան:

Այս մարգոց մէկը երկաթէ փոքր սեղան մըն էր բերած որուն վրայ հրամայեց Լիու-Սիուին տարածել իր բազուկները: Խեղճ աղջիկը հնազանդեցաւ եւ անմիջապէս զգաց որ իր ձեռքերը սեղմուեցան մամուլի պէս նեղ խորշի մը մէջ որ ամառիկ կը բռնէր զանոնք, մատները մատներուն դիմացը, բայց շարժուն չեղբերով բաժնուած:

—Կուզէ՞ք խոստովանիլ ձեր ոճիրը, հարցուց Մէնկ երրորդ անգամ:

(Շարունակելի)

ԳԵՂՈՒՆԻ

Վենետիկի Միթիթարեան Հարց Պատ. Միաբանութիւնը այս անգամ ալ կուռայ մեզ Գեղոնի անունով պրակ մը, որ ՈՐԲՈՒՆԻ և ուրիշ նմանօրինակ ճաշակաւոր հրատարակութեանց պէս կուզայ գեղազարդել մեր թանգարանները: Սոյն պրակին մէջ կը տեսնուին գունաւոր և գեղատիպ պատկերներ ու շահեկան յօդուածներ: Շքեղին ու ճաշակաւորին սիրահարը ունենալու է սոյն պրակը:

Կը ծախուի 2, 50 ֆրանք. դիմել ի Վենետիկ Ս. Ղազարու վանքը, եւ կամ ի Պուլկարիա Ա. Զարպհանէլեան գրատունը, Վառնա: